ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

13.04.2018թ.
Ժամը 09:30

Ք. Սևան

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Խաչիկ Կիրակոսյան

Վարդուհի Վարդանյան

Ռոմելա Հարությունյան

Մարիանա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.
(Մ. Սիմոնյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 07.04.2018թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Ռասսի>> ՍՊԸ-ի, <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ի, <<ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ>> ՍՊԸ-ի, <<Լենտեքս>> ՍՊԸ-ի, <<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ի և <<Հավերժ Ընկերներ>> ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում չի տրամադրել հարցման մասին տեղեկատվություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով **<<Ռասսի>> ՍՊԸ-ի, <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ի, <<ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ>> ՍՊԸ-ի, <<Լենտեքս>> ՍՊԸ-ի, <<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ի և <<Հավերժ Ընկերներ>> ՍՊԸ-ի** հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

(Մ. Սիմոնյան)

2.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին **<<Ռասսի>> ՍՊԸ-ն, <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ն, <<ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ>> ՍՊԸ-ն, <<Լենտեքս>> ՍՊԸ-ն, <<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ն և <<Հավերժ Ընկերներ>> ՍՊԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

<<Ռասսի>> ՍՊԸ-ի, <<ՄԱԴԷԼ>> ՍՊԸ-ի, <<ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ>> ՍՊԸ-ի և <<Լենտեքս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ համապատասխանում է սույն հրավերի պահանջներին:

<<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ի և <<Հավերժ Ընկերներ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 6.1/ չի համապատասխանում սույն հրավերի պահանջներին, մասնավորապես **<<Քինգ Մանչ>> ՍՊԸ-ի կողմից** ներկայացրած առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 6.1/ բոլոր չափաբաժիններով **<<ապրանքային նշանը>>** սյունակը լրացված չէ, իսկ **<<Հավերժ Ընկերներ>> ՍՊԸ-ի կողմից** ներկայացրած առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը /հավելված 6/ և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված 6.1/ ստորագրված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացի այդ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի

կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի /հավելված 6.1/ 11-րդ և 18-րդ չափաբաժինների <<**ապրանքային նշանը**>> և <<**արտադրողի անվանումը**>> սյունակները լրացված չեն:

2.2 Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<**Քինգ Մանչ**>> **ՍՊԸ-ին և** <<**Հավերժ Ընկերներ**>> **ՍՊԸ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 16.04.2018թ-ի ժամը 14:30 շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Սիմոնյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Սիմոնյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 16.04.2018թ-ին ժամը 15:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Վ. Վարդանյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան